ԹՈՖԼԵՐԻ ՖՈՒՏՈՒՐՈԼՈԳԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Գիտա-տեխնիկական հեղափոխության, տարբեր հասարակարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության պայմաններում էլ ավելի է սրվում գաղափարախոսական պայքարը, փոխվում են նրա օբյեկտը, ձևերն ու մեթոդները։

Հասարակության սոցիալական ապագայի ու նրա պրակտիկ իրագործման պրոբլեմներն այսօր առավել քան արդիական են՝ կապված ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխության հետ։ Ապագայի պրոբլեմը դառնում է աշխարհայացքային ու քաղաքական-գաղափարախոսական առանցքային պրոբլեմ։ Բուրժուական գաղափարախոսները հատուկ տեղ են հատկացնում ֆուտուրոլոգիական կոնցեպցիաներին, որոնք կոչված են նախ՝ մասնակցելու իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական ստրատեգիայի մշակմանը և ապա՝ կոմունիզմի դեմ մղվող գաղափարախոսական պայքարը դարձնելու ավելի ճկուն ու քողարկված։ Ֆուտուրոլոգիական հետազոտությունները հաճախ պարունակում են լուրջ, կոնկրետ արդյունքներ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ մոտեցում, պրոբլեմների խոր ու բազմակողմանի քննություն։

Սովետական ու արտասահմանյան մարքսիստ փիլիսոփաներն ու սոցիոլոգները ստեղծել են բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ՝ նվիրված ֆուտուրոլոգիական տարբեր տեսությունների վերլուծությանը[1]*։*

Փորձենք վերլուծել Արևմուտքում բավականին հայտնի ֆուտուրոլոգիական տեսություններից մեկի՝ ֆուտուրոշոկի, էությունը և ցույց տալ վերջինիս գաղափարախոսությունը, որն ունի ակնհայտ հակատեխնոկրատական կողմնորոշում։

Ֆուտուրոշոկի տեսության հեղինակը սոցիոլոգիայի պրոֆեսոր, հրապարակախոս Օլվին Թոֆլերն է, որը 1970 թ. լույս ընծայեց «Future shock» *գիրքը*[2]*։ Որպես ֆուտուրոլոգ նա հայտնի է նաև «Սոցիալական արժեքները և ապագան» գրքով։ Նրա տեսության մեջ, ինչպես նկատել է ակադեմիկոս Մ. Միտինը, դրսևորվել են բուրժուական հասարակությանը վերջին տարիներին առավել բնորոշ գաղափարախոսական տրամագրությունները*[3]*։ Օ. Թոֆլերի* «Future shock» *աշխատության ազդեցությունն այնքան մեծ էր, որ ԱՄՆ-ի*

---

[1] И. Бестужев-Лада, Будущее человечества и буржуазная футурология («Мировая экономика и международные отношения», 1969, № 11); Г. Эделинг, Прогнозирование и социализм, М., 1970; «Философия и прогностика», М., 1971; Э. А. Араб-Оглы, В лабиринте пророчеств. Социальное прогнозирование и идеологическая борьба, М., 1973; «Идеологические проблемы научно-технической революции», М., 1974.

[2] Alvin Toffler, Future shock, New York, 1970.

[3] «Идеологические проблемы научно-технической революции», М., 1974, стр. 12.

այն ժամանակվա պրեզիդենտ Ռ. Նիքսոնն իր խորհրդականներին ցուցում տվեց ստեղծել հատուկ խումբ և լրջորեն ուսումնասիրել Օ. Թոֆլերի առաջադրած պրոբլեմները։ Օ. Թոֆլերի աշխատությունը լայն արձագանք գտավ նաև աշխարհի շատ երկրներում։ Անգլիական «Մանչեստեր Գարդիանը» գրեց, որ այդ գրքի ազդեցությունն Արևմտյան մտքի վրա ավելի արմատական էր, քան Գելբրայթինը՝ 1950-ական թվականներին։ Գրախոսականներով հանդես եկավ սոցիոլոգների ու հրապարակախոսների մի հոծ խումբ։ Հիացմունքի խոսքեր գրեցին Զ. Սնոուն, Ջ. Դայսոնը, Մ. Մակլյուենը, ֆրանսիական «Ֆիգարո» և հնդկական «Դը Թայմս օֆ Ինդիա» թերթերը։

«Ֆուտուրոշոկի» տեսության գաղափարախոսական ֆունկցիան պարզելու համար անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես և ինչ տեսանկյունից է հեղինակը նկարագրում սոցիալական այն իրադրությունը, որը բնորոշվում է ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխությամբ։ «Այն, ինչ տեղի է ունենում այժմ,—գրում է Օ. Թոֆլերը,—ըստ երևույթին, ավելի լայն, խոր ու նշանակալից բնույթ ունի, քան արդյունաբերական հեղաշրջումը։ Բազմաթիվ հեղինակությունների կարծիքով, ներկա պահն իրենից ներկայացնում է ոչ ավելի, ոչ պակաս, քան երկրորդ մեծ ջրբաժանը մարդկության պատմության մեջ, որն իր նշանակությամբ համեմատելի է միայն պատմական ժառանգորդման մեջ առաջին խզման՝ բարբարոսությունից դեպի քաղաքակրթություն անցման հետ»[4]։

Մարդկությունը, իրոք, ապրում է մի դարաշրջանում, որն անցումային է և աննախադեպ։ Այդ անցումը պայմանավորված է գիտա-տեխնիկական հեղափոխությամբ, իսկ վերջինս տարբեր սոցիալական սիստեմներում տարբեր կերպ է դրսևորում իր առանձնահատկությունները, որը չի տեսնում Օ. Թոֆլերը։ Ավելի ճիշտ՝ նա գիտակցորեն շրջանցում է դրանք։

Գրքում արծարծվող հիմնական պրոբլեմը ժամանակակից բարձր զարգացած, «ինդուստրիալ» հասարակության սոցիալական ինստիտուտների, արժեքների սիստեմի, անհատի սոցիալական, ադապտացիոն հնարավորությունների պրոբլեմն է՝ «գերինդուստրիալ» (արդի գիտա-տեխնիկական) հեղափոխության պայմաններում։ Սոցիալ-հոգեբանական այն պրոցեսները, որոնք ուղեկցում են գիտության ու տեխնիկայի զարգացմանը, Օ. Թոֆլերը իմաստավորում է «ֆուտուրոշոկ» անվան տակ։ Ի՞նչ է «ֆուտուրոշոկը»։ «Ներկայիս և 21-րդ դարի միջև ընկած երեք կարճ տասնամյակների ընթացքում,—գրում է Օ. Թոֆլերը,—միլիոնավոր հասարակ, հոգեպես նորմալ մարդիկ երես առ երես բախվելու են ապագայի հետ։ Աշխարհի առավել հարուստ և տեխնոլոգիական տեսակետից առաջավոր երկրների քաղաքացիներն այլևս չեն կարողանա պահպանել փոփոխության անընդհատ պահանջմունքը, որը բնորոշում է մեր ժամանակը։ Նրանց համար ապագան վրա է հասնելու շատ շուտով։ Այս գիրքը փոփոխության մասին է և այն մասին, թե ինչպես ենք մենք հարմարվում դրան... Սա ապագայի մասին է և այն շոկի մասին, որ ապագան է բերում... Դա (փոփոխությունը—Բ. Ղ.) կոնկրետ ուժ է, որ խորանում է մեր անձնական կյանքի մեջ, ստիպում է մեզ կատարելու նոր դերեր և կանգնեցնում է մեզ նոր ու հզոր հոգեկան խանգարման վտանգին դեմ հանդիման։ Այս նոր հիվանդությունը կարող ենք կոչել «ապագայի

---

[4] A. Toffler, նշվ. աշխ., էջ 13։

շոկ...»[5]։ Օ. Թոֆլերը բավականին մռայլ գույներով է նկարագրում բուրժուական հասարակության հոգեվիճակը (նման այն գույներին, որոնք օգտագործում էին, օրինակ, Նիցշեն ու Շպենգլերը)։ Դրանով ավելի է մեծանում նրա տեսության նշանակությունն ընթերցողի համար։

Ինդուստրիալ Ամերիկան, ըստ նրա, պատրաստվում է թռիչք կատարելու դեպի «գերինդուստրիալ» մի հասարակարգ, որի համար ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը կամ, ինչպես ինքն է անվանում, «գերինդուստրիալ» հեղափոխությունը ստեղծում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախադրյալներ։ Եվ որպեսզի այդ թռիչքը հասարակության համար «կործանարար» չլինի և այն ի վիճակի լինի դիմագրավելու ապագան, Օ. Թոֆլերն առաջարկում է «ադապտացիայի մի լայն, նոր տեսություն»։

Նա չի առաջարկում սանձահարել գիտության և տեխնիկայի զարգացումը, ինչպես այդ անում են որոշ սոցիոլոգներ, որոնք կապիտալիստական հասարակության սոցիալական հակասությունների պատճառ են համարում գիտությունն ու տեխնիկան։ Ընդհակառակը, նա գտնում է, որ շատ պրոբլեմներ գիտության ու տեխնիկայի անբավարար զարգացման պատճառով մնում են անլուծելի և այդ տեսանկյունից հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է հասարակական հարաբերությունների ուսումնասիրության վրա (իհարկե առանց սոցիալ-դասակարգային հարաբերությունների վերլուծության)։ Գիտությունն ու տեխնիկան ինքնին չեն կարող լուծել սոցիալական հակասությունները։ Այդ բանը Օ. Թոֆլերը հասկանում է՝ քննադատելով տեխնոկրատներին և բոլոր նրանց, ովքեր տուրք են տալիս տեխնոլոգիական դետերմինիզմին։ Դրանք մի կողմից սոցիալական հոռետեսության գաղափարախոսներն են (Էլյուլ, Մեմֆորդ, Ֆրոմմ, Մարկուզե), իսկ մյուս կողմից՝ «սոցիալական տեխնոլոգիայի»։ Նա իրավացիորեն քննադատում է այդ երկու ծայրահեղությունները։ Խոսելով անհատի ազատության սահմանների ու հնարավորությունների մասին, Օ. Թոֆլերը գրում է. «Եվ այսպես, չնայած Էլյուլների ու Ֆրոմմների, Մեմֆորդների և Մարկուզեների հակատեխնոլոգիական ճառերին, հենց դերինդուստրիալ հասարակությունը՝ երբևէ գոյություն ունեցած հասարակություններից ամենազարգացածը, ի վիճակի կլինի լայնացնելու ազատության սահմանները։ Ապագայի մարդիկ իրենց ընդունակությունները դրսևորելու ավելի մեծ հնարավորություններ կունենան, քան մարդկանց որևէ խումբ ունեցել է անցյալում։

...Ազատազրկումը պետք է չախչախվի և կչախչախվի։ Բայց այն չի կարելի չախչախել տեխնոլոգիայի դեմ ուղղված տիրադների միջոցով... պասիվության, միստիցիզմի և իռացիոնալության կոչերի միջոցով»[6]։

Իհարկե, ազատության պրոբլեմի հոռետեսական մեկնաբանությունը դիտական չէ, մանավանդ որ այդ արվում է միստիցիզմի ու իռացիոնալիզմի դիրքերից։ Սակայն պրոբլեմի Թոֆլերյան մեկնաբանությունը ևս գիտական չէ, չնայած ռացիոնալիստական է։ Այն չափազանց վերացական է, զուրկ պատմական հողից և կտրված իրական սոցիալական հենքից։ Սովետական փիլիսոփա Է. Արաբ-Օղլին նշում է, որ Օ. Թոֆլերի քննադատության սուր

5 Նույն տեղում, էջ 9—10։
6 Նույն տեղում, էջ 30։

ծայրն ուղղված է «սոցիալական տեխնոլոգիայի» կոնցեպցիայի դեմ[7]։ Այդ կոնցեպցիան հետևողականորեն զարգացնում էին ֆուտուրոլոգներ Օ. Հելմերն ու Օ. Վայնբերգը։ «Սոցիալական տեխնոլոգիայի» գաղափարախոսները գրտնում են, որ ցանկացած սոցիալական պրոբլեմ կարելի է վերածել տեխնոլոգիականի և գտնել դրա տեխնիկական լուծումը։ Այս տեսությունն արտահայտում է մոնոպոլիստական բուրժուազիայի առավել հետադիմական շրջանների տեխնոկրատական նկրտումները։

Բուրժուական սոցիալական լավատեսության տեխնոկրատական հիմնավորումը, բախվելով վերջին տասնամյակի կապիտալիստական իրականության հետ, փաստորեն դրսևորեց իր լիակատար մնանկությունը։ Օ. Թոֆլերն իրավացի է, պնդելով, որ գիտա-տեխնիկական հեղափոխության պրոցեսում բուրժուական հասարակության առջև ծառացած պրոբլեմներն առաջին հերթին սոցիալ-քաղաքական են և ոչ թե տեխնոլոգիական։ Բուրժուական լիբերալ-դեմոկրատական գիրքերից նա քննադատում է մասնավոր սեփականության ու շահույթի վրա հիմնված սոցիալական հարաբերություններն ու ինստիտուտները՝ դրանք համարելով պատմական անախրոնիզմ։ Այս առումով, ինչպես իրավացիորեն նշում է Է. Արաբ-Օղլին, նա հետևում է «նոր ձախերին». 60-ական թվականների նրանց քննադատական տեսությանը։ Մեր փիլիսոփայական գրականության մեջ արդեն ցույց է տրվել նման քննադատության ուտոպիական, մանրբուրժուական բնույթը[8]։ Կապիտալիստական հասարակական հարաբերությունների Թոֆլերյան քննադատությունն այս տեսակետից նույնպես ուտոպիական է, մանրբուրժուական։ Եվ, լինելով այդպիսին, այն պատմական առումով դրական ոչինչ չի պարունակում։

Իր գրքի վերջին՝ «Սոցիալական ֆուտուրիզմի ստրատեգիան» գլխում Օ. Թոֆլերը փորձում է կանխագծել սոցիալական ապագայի ուղիները։ Այդ սոցիալական ապագան, ինչպես արդեն նշեցինք, «գերինդուստրիալ», «հետկապիտալիստական» հասարակությունն է։

Հենց այս գլխում են պարզորոշ ուրվագծվում Օ. Թոֆլերի տեսական-մեթոդաբանական դիրքերը, նրա կապը Ռոսթոուի, Գելբրայթի, Բելլի հետ, նրա ծրագրի ուտոպիզմը։ «Այն, ինչ մենք այժմ դիտում ենք,—գրում է Օ. Թոֆլերը,—ինդուստրիալիզմի վախճանի սկիզբն է ու տեխնոկրատական պլանավորման կրախը։ Տեխնոկրատական պլանավորման տակ ես նկատի ունեմ ոչ միայն ազգային մասշտաբով կենտրոնացված պլանավորումը, որը մինչև վերջերս բնորոշ էր սոցիալիստական երկրներին, այլև պակաս պաշտոնական ապակենտրոնացված փորձերը՝ սիստեմատիկորեն կառավարելու այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում տեխնիկապես զարգացած բոլոր պետություններում, անկախ նրանց քաղաքական հավատամքից»[9]։ Այսպիսով, պլանավորման բոլոր տեսակները հեղինակը մերժում է, քանի որ դրանք «ինդուստրիալիզմի» արդյունք են և տեխնոկրատական։ «Ինդուստրիալիզմ» տերմինը հատուկ դեր է կատարում կոնվերգենցիայի ժամանակակից տեսությունների մեջ։ Դրա տակ խմբավորվում են ինչպես կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական երկրները։ Դա հնարավորություն է տալիս ան-

---

7 Э. А. Араб-Оглы, նշվ. աշխ., էջ 103։

8 «Социальная философия франкфуртской школы», М., 1975.

9 A. Toffler, նշվ. աշխ., էջ 447։

տեսնելու արմատական հակադիր սոցիալ-տնտեսական սիստեմների սկզբունքային տարբերությունները։ «Ինդուստրիալիզմի և՛ կապիտալիստական, և՛ կոմունիստական տարբերակները սիստեմներ էին, որոնք ուղղված էին նյութական բարեկեցության առավելագույն աճին,— գրում է Օ. Թոֆլերը։— Տեխնոկրատների գլխավոր նպատակը, ինչպես Դետրոյտում, այնպես էլ Կիևում, տնտեսական առաջընթացն է. նրանց գլխավոր միջոցը տեխնիկան է։ Այն փաստը, որ մի դեպքում առաջընթացը պետք է նպաստի մասնավոր բարեկեցությանը, իսկ մյուս դեպքում, տեսականորեն, հասարակականին՝ չի փոխում հիմնական նախադրյալը»[10]։

Հեղինակի այս միտքը լավ է բնորոշում նրա ստրատեգիական դիրքորոշումը, նրա տեսության էությունը։ Օ. Թոֆլերը սխալվում է, պնդելով, որ սկզբունքային տարբերություն չկա կապիտալիստական ու սոցիալիստական տնտեսությունների զարգացման նպատակի ու միջոցների միջև, այն բանի միջև, թե տնտեսական առաջընթացը ո՞ւմ բարեկեցությանն է նպաստում՝ հասարակակա՞ն, թե՞ մասնավոր սեփականատիրոջ։ Սոցիալիստական հասարակարգում տնտեսական առաջընթացը երբեք ինքնանպատակ չի եղել և չի էլ կարող այդպիսին լինել։ Նույնպես և տնտեսական պլանավորումը։ ՍՍՀՄ-ի՝ աշխարհում առաջին սոցիալիստական պետության, պատմական փորձը դրա հիանալի օրինակն է։ Սոցիալիստական պետության ստեղծման առաջին իսկ տարիներից տնտեսական զարգացման պլանները հետապնդել են որոշակի սոցիալական նպատակներ։ Դեռ 1923 թ. Վ. Ի. Լենինը գրել է. «...մենք այժմ արմատական սոցիալական փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ ժամկետներ սահմանելու՝ պատմության մեջ բավականին հազվադեպ առիթ ենք ստացել, և մենք այժմ պարզ տեսնում ենք, թե ինչ կարելի է անել հինգ տարվա մեջ և ինչ բանի համար հարկավոր են ավելի մեծ ժամկետներ»[11]։

Սոցիալական հեռանկարային պլանավորման հնարավորությունը սոցիալիստական հասարակարգում հիմնվում է տնտեսության զարգացման օրինաչափությունների և հասարակության սոցիալական կառուցվածքում կատարվող առաջադիմական տեղաշարժերի միջև գոյություն ունեցող օբյեկտիվ, դինամիկ ու ներդաշնակ կապի վրա։ Սոցիալիզմի պայմաններում տնտեսական պլանավորումն ընկած է սոցիալական պլանավորման հիմքում և վերջինիս համար միջոցի դեր է կատարում։ Սոցիալական պլանավորումն իր հերթին անհատի բազմակողմանի զարգացման համար ստեղծում է անհրաժեշտ սոցիալական նախադրյալներ։ Օ. Թոֆլերը էական տարբերություն չէ տեսնում սոցիալիստական և մոնոպոլիստական-կապիտալիստական պլանավորումների միջև։ Դրա հետևանքն այն է, որ տեխնոլոգիական դետերմինիզմի դեմ մղած պայքարում նա մինչև վերջ հետևողական չէ և չի էլ կարող լինել, որովհետև նրա տեսությունը կոնվերգենցիայի տեսության տարատեսակներից է, և, որպես այդպիսին, իրականացնում է որոշակի գաղափարախոսական ֆունկցիա։

Խոսելով ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխության հետևանքների մասին, Օ. Թոֆլերը շեշտը դնում է ոչ թե արմատական սոցիալ-

10 Նույն տեղում, էջ 448։

11 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 33, էջ 574։

տնտեսական գործոնների, այլ «համամարդկային» (հոգեբանական, ֆիզիոլոգիական) երևույթների վրա։ Այս յուրահատկությամբ (սոցիալ-հոգեբանական կողմնորոշումը) «ֆուտուրոշոկը» որոշակիորեն տարբերվում է կոնվերգենցիայի մյուս տեսություններից։ Բայց, լինելով այդպիսին, «ֆուտուրոշոկը» հետապնդում է միևնույն գաղափարախոսական նպատակը՝ հերքել սոցիալ-քաղաքական հեղափոխության անհրաժեշտությունը, ժամանակակից հասարակական զարգացման դիալեկտիկայի գիտական ըմբռնումից բղխող մարքսիստական-ընկինյան այն եզրակացությունը, որ գիտա-տեխնիկական հեղափոխության դարաշրջանը միաժամանակ սոցիալ-քաղաքական հեղափոխությունների դարաշրջան է։ Հանդես գալով բուրժուական ռեֆորմիզմի դիրքերից, Օ. Թոֆլերն «ինդուստրիալիզմից գերինդուստրիալիզմին անցման դարաշրջանում» իրական չի համարում սոցիալ-քաղաքական հեղափոխության հնարավորությունը։ Պատճառաբանելով, որ տեխնոլոգիական տեսակետից բարձր զարգացած երկրներում չկա այն ուժը, որը կհանդիսանա այդ հեղափոխության կրողը, նա գրում է. «Բարձր զարգացած տեխնոլոգիական հասարակություններում աշխատավորական զանգվածները համատարած անտարբերություն են ցուցաբերում քաղաքական հեղափոխության կոչերի նկատմամբ, որոնց նպատակը սեփականատիրության մի ձևի փոխարինումն է մի այլ ձևով»[12]։

Այս հարցում Օ. Թոֆլերը հետևում է «նոր ձախերի» տեսաբաններին, որոնցից Հաբերմասը «Զորս փաստ Մարքսի դեմ» գրքում գրում է. «Այսօր դասակարգային գիտակցություն, հեղափոխականություն հնարավոր չէ հայտնաբերել նույնիսկ բանվորների կորիզի մեջ։ Նման պայմաններում ցանկացած հեղափոխական տեսություն զուրկ է հասցեից։ Փաստարկներն այլևս չեն կարող վերածվել լոզունգների։ Մարքսի հույսերը, որ տեսությունը կդառնա նյութական ուժ, երբ կտիրապետի մասսաներին, այսօր պետք է թողնել»[13]։ Նույն կերպ են դատում նաև Ադորնոն և Մարկուզեն, որոնք գտնում են, թե «հեղափոխություն», «պրոլետարիատ», «դասակարգային գիտակցություն» և այլն «արդեն հնացել են»[14]։ 1960-ական թվականների վերջերի և 70-ական թվականների սկզբների հասարակական զարգացման ընթացքը ցույց է տալիս ճիշտ հակառակը։ «Տեխնոլոգիական տեսակետից բարձր զարգացած» երկրներում տեղի ունեցան սոցիալ-քաղաքական խոր տեղաշարժեր, որոնք արդյունք էին համաշխարհային հեղափոխական շարժման հետագա ծավալման և դրա գլխավոր գործոններից մեկի՝ համաշխարհային բանվոր դասակարգի դաղափարական-քաղաքական մակարդակի հետագա անշեղ բարձրացման։ Դրա օրինակն են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իտալիան ու Ֆրանսիան, որտեղ կոմունիստական գաղափարները գնալով ավելի ու ավելի խոր արմատներ են ձգում աշխատավորական լայն զանգվածների մեջ։

Ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխությունը հատուկ սրությամբ է դնում դեմոկրատիայի, գիտության ու տեխնիկայի զարգացման վրա դեմոկրատական վերահսկողություն սահմանելու պրոբլեմը։ Մոնոպոլիստական կապիտալիզմը յուրովի է օգտագործում գիտա-տեխնիկական հեղափո-

---

12 A. Toffler, նշվ. աշխ., էջ 475։

13 «Социальная философия франкфуртской школы», стр. 199.

14 Նույն տեղում։

խության նվաճումները։ Դա հատկապես ցայտուն կերպով է դրսևորվում Միացյալ Նահանգներում, որտեղ գիտության ու տեխնիկայի նվաճումներն ի սպաս են դրվում երկրի ռազմականացման շահերին։ Մինչդեռ այն հնարավորությունները, որոնք ամբողջ հասարակության ու մարդու զարգացման համար ընձեռում են գիտությունն ու տեխնիկան, չափազանց սահմանափակ են օգտագործվում։ Բնորոշ է, որ ռազմականացման աստիճանը ԱՄՆ-ում կազմում է մոտ 62%[15]։

Կապիտալիստական երկրներում բնակչության լայն խավերի շրջանում ստեղծվում է այն տպավորությունը, որ գիտության ու տեխնիկայի զարգացումը ոչ միայն չի նպաստում սոցիալական առաջընթացին, այլև ուղղակիորեն արգելակում է այն։ Ամերիկյան կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Զ. Մոշերը 1971 թ. ելույթ ունենալով կոնգրեսի նիստերից մեկում, նշում էր. «Գնալով ավելի մեծ թվով ամերիկացիներ... հաստատում են, որ գիտությունն ու տեխնոլոգիան կապ չունեն մարդկային ակնկալությունների հետ»[16]։ Ամերիկյան դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչներն անկեղծորեն մտահոգված են նման վիճակով և փորձում են ստեղծված իրադրությունից դուրս գալու ուղիներ փնտրել։ Սակայն նրանց առաջարկած լուծումները գիտական չեն ու ուտոպիզմի սահմաններից դուրս չեն գալիս։ Իրենց տեսական որոնումներում նրանցից շատերը գալիս են այն եզրակացության, որ կապիտալիստական հասարակությունն այլևս չի համապատասխանում ապագայի պահանջներին։ Օ. Թոֆլերը ևս գտնում է, որ կապիտալիզմի ստեղծած սոցիալական արժեքներն ու ինստիտուտները «կողմնորոշված չեն դեպի ապագան» և այդ պատճառով գոյության իրավունք չունեն։ Նա իրավացի է, երբ գիտության ու տեխնիկայի զարգացման սոցիալական արժեքը որոնում է դեմոկրատիայի և մարդու ազատության սահմանների ընդլայնման մեջ։ Բայց, իր հերթին, գիտության ու տեխնիկայի նման զարգացումը պահանջում է համապատասխան հասարակական հարաբերություններ, դեմոկրատիայի որոշակի զարգացում։ «Ֆուտուրոշոկի» հեղինակն առաջարկում է ամբողջովին ուտոպիական մի ծրագիր և կոչ է անում այն իրականացնել բոլոր զարգացած երկրներում։ Նա կոչ է անում վերածնել կապիտալիստական հասարակության «մոռացված» դեմոկրատական ավանդույթները, արմատախիլ անել ամերիկյան գիտակցության մեջ արմատավորված տեխնոկրատական մտածելակերպի դոգմաները, ստեղծել, այսպես կոչված, «սոցիալական ապագայի պլանավորման խորհուրդներ» և այլն[17]։ Դեմոկրատիայի Թոֆլերյան մեկնաբանությունը վերացական է, զուրկ կոնկրետ պատմական բովանդակությունից։ Այն կոչված է մասսաներին շեղելու ակտիվ, հեղափոխական, սոցիալիզմի համար մղվող պայքարից։ Նշելով, որ դեմոկրատիայի համար մղվող պայքարը սերտորեն կապված է սոցիալիզմի համար մղվող պայքարի հետ, Վ. Ի. Լենինը գրում է. «...հետևողական դեմոկրատիան, մի կողմից, սոցիալիզմի է փոխարկվում, իսկ մյուս կողմից... սոցիալիզմ է պահանջում»[18]։ Հա-

---

15 «Мировая экономика и международные отношения», 1973, № 6, стр. 78.

16 А. В. Кукаркин, По ту сторону расцвета. Буржуазное общество: культура и идеология, М., 1974, стр. 52.

17 A. Toffler, նշվ. աշխ., էջ 478։

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 578։

սարակության սոցիալիստական վերափոխումն ամենախորն է ու դեմոկրատականը պատմության մեջ։

Բուրժուական ֆուտուրոլոգիան միատարր չէ։ Տարբեր ֆուտուրոլոգիական ուղղությունների ու սոցիոլոգիական մտքի առանձին ներկայացուցիչների միջև ընդհանուրն այն է, որ նրանց մեծ մասն այս կամ այն կերպ թերահավատ է կապիտալիստական հասարակարգի հետագա զարգացման հնարավորությունների նկատմամբ։ Նրանք «հետկապիտալիստական» հասարակարգը պատկերացնում են առանց մասնավոր սեփականության ու շահույթի։ Բայց միայն այսքանը։ Ինչ վերաբերում է սոցիալական վերափոխումների իրականացման կոնկրետ ուղիներին, այն սոցիալական ուժին, որն օբյեկտիվորեն պետք է դառնա այդ վերափոխումների կրողը և ամենից ավելի է շահագրգռված դրանց մեջ, ապա նրանք չեն տեսնում այդ ուժը. նրանց դիրքերը բուրժուական լիբերալ-ռեֆորմիստական են։

Հասարակական կանխատեսումը, եթե այն գիտական է, պետք է ունենա յուրջ գիտական-մեթոդաբանական հիմք, ընդունի բանվոր դասակարգի ու մարքսիստական-լենինյան կուսակցության հեղափոխական դերը։ Բուրժուական ֆուտուրոլոգիային մենք հակադրում ենք մարքսիստական հասարակական կանխատեսումը, որը հիմնվում է պատմության նկատմամբ մատերիալիստական հայացքի դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդի և հավելյալ արժեքի տեսության վրա։

Մարդուն միշտ էլ հետաքրքրել է վաղվա օրը։ Սակայն ապագայի նկատմամբ հետաքրքրությունն ավելի է սրվում գիտա-տեխնիկական հեղափոխության ու կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանում։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի պատմական հաջողությունները, որոնք ձեռք են բերվում կապիտալիստական հասարակարգի խորացող ճգնաժամի ֆոնի վրա, աշխարհի ժողովուրդներին ակնհայտորեն ցույց են տալիս, թե ինչպիսի ապագա պետք է ընտրել։ Կյանքը ցույց է տալիս, որ գիտա-տեխնիկական հեղափոխության դարաշրջանում մարդկության համար չկա այլ ընտրություն, քան կոմունիզմը։

КРИТИКА ИДЕОЛОГИЧЕСКОЙ ФУНКЦИИ ФУТУРОЛОГИИ О. ТОФФЛЕРА

БАГРАТ ГАРИБДЖАНЯН

Резюме

Критика буржуазной футурологической концепции американского социолога О. Тоффлера является актуальной темой, вытекающей из установок XXV съезда КПСС о борьбе идей. Идеологические позиции О. Тоффлера изложены в его нашумевшей на Западе книге «Футурошок». Искажая факты действительности, Тоффлер пытается доказать якобы неправильность научного марксистского социального прогноза, утверждающего торжество коммунизма.

В эпоху научно-технической революции единственной социальной альтернативой человечества, создающей условия для всестороннего развития личности, является социализм.